«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈԱԱԿ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2020

ՆԱԽԱԲԱՆ

Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ ՎՊԳՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Գործընթացը կազմակերպելիս ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ի «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ .... Error! Bookmark not defined.
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....Error! Bookmark not defined.
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .... Error! Bookmark not defined.
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....Error! Bookmark not defined.
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....Error! Bookmark not defined.
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....12
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ....12
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ....14
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ....16
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ....19
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ....21
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ....23
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....24
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ....26
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ....28
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ....29
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....31
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....32
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....32
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....33
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....35
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....37
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....37
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....38

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Ներքին և արտաքին շահակիցները կիսում են ՎՊԳՔ առաքելությունն ու նպատակները, արժևորում քոլեջի դերը տարածաշրջանում:
2) Կառավարման մարմինների աշխատանքը կանոնակարգված է և կրում է համագործակցային բնույթ:
3) Փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է հստակ սահմանված ընթացակարգով:
4) Դասախոսների մեծ մասը ներգրավված է կառավարման տարբեր մակարդակներում և տիրապետում է գործընթացների վերաբերյալ տեղեկատվությանը:
5) Կրթական ու այլ նպատակների իրականացման համար քոլեջն ապահովված է անհրաժեշտ և արհեստավարժ մարդկային ռեսուրսներով:
6) Քոլեջի ՄԿԾ փաթեթները ամբողջական են և ներառում են շնորհվող որակավորումների վերաբերյալ մանրամասն նկարագրություն:
7) Ուսումնառության նյութերում պահպանված են հակիրճությունը, հասանելիությունը, գերակշռում են ուսանողների համար ինքնուրույն գործնական առաջադրանքները, հստակ սահմանված է դասի նպատակը:
8) Առկա են ուսանողների հավաքագրման, ընդունելության հստակ մեխանիզմներ:
9) Կուրսղեկի ինստիտուտը արդյունավետ է գործում ուսանողների կարիքների վերհանման, նրանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ:
10) Քոլեջն ունի նվիրյալ և փորձառու դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ:
11) Քոլեջը միջին մասնագիտական կրթություն իրականացնող քիչ հաստատություններից է, որտեղ ուսանողները գրում են կուրսային և դիպլոմային աշխատանքներ:
12) Քոլեջում ներդրված է հաշվետվողականության համակարգ հստակ ժամանակացույցով:
13) Քոլեջում ստեղծված են հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու գործուն մեխանիզմներ:
14) Քոլեջը կարիերայի կենտրոնը տարածաշրջանում հայտնի է իր պրոակտիվ գործունեությամբ:
15) Քոլեջը հաստատել է գործընկերային հարաբերություններ տարածաշրջանի կարևոր դերակատարների հետ:
16) Քոլեջի ներքին շահակիցները տեղեկացված են և կարևորում են որակի ներքին ապահովման գործընթացները:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Քոլեջի առաքելության մեջ շնորհվող ոչ բոլոր որակավորումներն են հստակ արտահայտված:
2) Քոլեջի ռազմավարական ծրագրում հստակ չեն ձևակերպված վերջնարդունքները, բացակայում են չափելի որակական և քանակական ցուցիչները:

3) Քոլեջի կառավարման ու վարչարարության գործընթացում մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները թերի են, բարելավման մեխանիզմները չեն գործում:
4) Որոշ դասընթացներ իրականացվում են դասախոսությունների թելադրման մեթոդով, ինչը չի համապատասխանում մոդուլային կրթության պահանջներին:
5) Ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:
6) Ուսխորհուրդը նախաձեռնողականություն չի ցուցաբերում քոլեջի կառավարման, որոշումների կայացման, թերությունների վերացման գործընթացներում:
7) Դասախոսների տարիքային կազմը և երիտասարդների պակասը չի ստեղծում բարենպաստ միջավայր քոլեջի կրթական և այլ գործընթացների արդիականացման համար:
8) Քոլեջը չունի հետազոտության ոլորտում իր հավակնություններն ու հետաքրքրություններն արտահայտող քաղաքականություն, որը կհամապատասխաներ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին:
9) Կրթության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմներ մշակված չեն:
10) Կրթական վերջարդյունքերի ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն ու նյութատեխնիկական ռեսուրսները բավարար չեն:
11) Հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմներ առկա չեն, չեն մատուցվում կարճաժամկետ կրթական և խորհրդատվական ծառայություններ:
12) Քոլեջը միջազգայնացման ոլորտում որևէ հավակնություն չունի:
13) Որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքակազմը լրամշակման կարիք ունեն:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1) Վերաձևակերպել առաքելությունը, որպեսզի այն առավել հստակ արտահայտի շնորհվող որակավորումների բովանդակությունը:
2) Մշակել ՌԾ նպատակների վերջնարդյունքների չափելի՝ որակական և քանակական գնահատման ցուցիչներ, ներդնել գործընթացների գնահատման գործուն մեխանիզմներ:
3) Վերանայել և բազմազանեցնել քոլեջի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմները, հստակեցնել դրանց կիրառման ընթացակարգերը:

Կառավարումն ու վարչարարությունը

1) Քոլեջի կառավարումն իրականցնել որակի ապահովման շրջափուլով՝ հատկապես ուշադրություն դարձնելով գնահատման և բարելավման մեխանիզմների ներդրմանը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

2) Դասապրոցեսի ընթացքում հնարավորինս շատ օգտագործել դասավանդման ժամանակակից մեթոդներ, ուսանողներին տրամադրել պատրաստի ուսումնառության նյութեր:
3) Օգտագործել գործատուների և շրջանավարտների ներուժը ինչպես ռեսուրսների ապահովման, այնպես էլ կրթական ծրագրերի վերանայման և շուկայի պահանջներին համապատասխանեցման նպատակներով:
4) Ուսումնական և արտադրական պրակտիկաները կազմակերպել առավել նպատակային՝ բարձրացնելով դրանց արյունավետությունը:

Ուսանողները

5) Որպես արտաքին շահակից դիտել նաև դպրոցահասակ երեխաների ծնողներին, ինչը կնպաստի ուսանողների հավաքագրման արդյունավետությանը:
6) Ուսանողների համար կազմակերպել տարաբնույթ լրացուցիչ պարապմունքներ /դասընթացներ/՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները:
7) Ներդնել վերջնարդյունքների ձևավորմանը միտված պրակտիկաների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

8) Մշակել անձնակազմի զարգացման և ինքնազարգացման մոտիվացիոն մեխանիզմներ:
9) Հնարավորինս երիտասարդացնել դասախոսական կազմը՝ խրախուսելով նաև օտարերկրյա կամավորների ներգրավումը:

Հետազոտությունը և զարգացումը

10) Իրականացնել աշխատանքներ կրթական և այլ գործընթացներում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխանան հետազոտական բաղադրիչի ներդրման և հետազոտության խրախուսման ուղղությամբ:
11) Իրականացնել դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական նախագծեր, որոնք կարող են նպաստել կրթական ծրագրերի արդիականացմանը, արտաբյուջետային միջոցների ձևավորմանը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

12) Հայթայթել դրամաշնորհային ծրագրեր՝ գյուղատնտեսական լաբորատորիաներ, սմարթ ջերմոցներ և գոմեր և այլ ենթակառուցվածքների ձևավորման համար, որոնք, կնպաստեն ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը, միևնույն ժամանակ:
13) Քոլեջի ուսանողների հետ մշակել ձեռնարկատիրական գործունեության ծրագրեր և ստացված եկամուտներն ուղղել լաբորատորիաների վերազինման, ռեսուրսների արդիականացման նպատակներին:

Հասարակական պատասխանատվությունը

14) Իրականացնել շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մշտադիտարկում՝ պահանջված դասընթացների ցանկը բացահայտելու, դրանց մշակումն ապահովելուն կատարելագործելու համար:
15) Քոլեջը ֆեյսբուքում ներկայացնել ոչ թե անձի պրոֆիլով, այլ էջով, ինչը թույլ կտա վիճակագրական տեղեկատվության հավաքգրել դիտելիության և լսարանի վերաբերյալ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

16) Միջոցառումներ իրականացնել ազգային և միջազգային միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ համագործակցության, հաջողված փորձի ուսումնասիրության և ներդրման ուղղությամբ:
17) Քայլեր ձեռնարկել միջազգային կապերի հաստատման՝ ուսանողների և դասախոսների շարժունակության ուղղությամբ՝ ապահովելով համագործակցության վերաբերյալ տեղեկատվության լայն տարածումը:
18) Քոլեջի միջազգայնացմանը նպաստելու համար շահակիցների շրջանում մեծացնել օտար լեզուների տիրապետման մոտիվացիան:

19) Ստեղծել և կիրառել բենչմարքինգի մեխանիզմներ՝ համանման որակավորումներ շնորհող կրթական հաստատությունների լավագույն փորձի ուսումնասիրման և ներդրման համար:

Որակի ներքին ապահովման համակարգը

20) Վերանայել ՈԱ ապահովման ընթացակարգերը, համակարգել մեխանիզմները, մշակել համապատասխան ու գործիքակազմ՝ ՊԻՍԲ շրջափուլը բոլոր գործընթացներում ներդնելու համար:
21) Տրամադրել անհրաժեշտ նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ որակի ապահովման ներքին կառույցի արդյունավետ աշխատանքի համար:

Մարգարիտա Պողոսյան

Ամսաթիվ՝ 23.01.2020

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» համաձայն ձևավորված փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից: Փորձագիտական խմբի անդամներն էին.

1. **Մարգարիտա Պողոսյան՝** ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժնի պետ-գործերի կառավարիչ, Հյուսիսային համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, ՀՀ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Քրիստինե Հակոբյան՝** Կոտայքի տարածաշրջանային քոլեջի աշխատակազմի ղեկավար, դասախոս, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Լիանա Ամիրաղյան՝** Երևանի տարածաշրջանային 2-րդ քոլեջի դասախոս, կարիերայի պատասխանատու, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ռոլֆ Օթթո Կուխենբուդ՝** Ռոստոկի համալսարանի դասախոս, գյուղատնտեսության խորհրդատու, Գերմանիա, փորձագիտական խմբի անդամ,
5. **Ռեգինա Բաղդասարյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական հաշվառում մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ-ի Քաղաքականությունների մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Զաքարյանը:

Թարգմանությունը կատարել է Վանաձորի պետական համալսարանի Որակի ապահովման կենտրոնի կրթության որակի աուդիտոր Արմինե Մաթևոսյանը:

Գործընթացում որպես դիտորդ մասնակցել է Ագրոբիզնեսի և գյուղատնտեսության զարգացման բուլղարական համալսարանի որակի ապահովման և հավատարմագրման գծով պրոռեկտոր Պատրիցիա Գեորգիևան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է քոլեջի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամներն, այդ թվում՝ թարգմանիչը, համակարգողները և դիտորդը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը ՈԱԱԿ-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի Քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը: ՈԱԱԿ-ը կայացրել է դիմում-հայտի ընդունման մասին որոշում և կազմել ու հաստատել աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Նախապատրաստական փուլ

Քոլեջը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ը

կազմակերպել է ինքնավերլուծության թարգմանությունն՝ արտաքին մասնագետի ներգրավմամբ:

ՈԱԱԿ-ի համակարգողներն ուսումնասիրել են ինքնավերլուծությունը և կից փաթեթը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Քոլեջի ինքնավերլուծությունը և կից փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել է հավատարմագրման գործընթացի համակարգողների դրական կարծիքը ստանալուց հետո:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների կողմից իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ,
2. ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով,
3. փորձագիտական այց դերային խաղերի միջոցով,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն, իրականացրել է նախնական գնահատում, որի արդյունքում դուրս են բերվել քոլեջի հնարավոր ուժեղ նվ թույլ կողմերը: Ըստ ձևաչափի՝ պատրաստվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողները փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել են փորձագիտական այցի ժամանակացույցը[1]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

2019 թ. դեկտեմբերի 26-27-ին քոլեջի տնօրենի հետ հեռախոսով և առցանց քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, քննարկվել են նաև կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր: Տնօրենի հետ զրույցից պարզ է դարձել, որ քոլեջի շենքը այժմ վերանորոգվում է և ժամանակավորապես ուսումնական գործընթացը կազմակերպվում է Ազգարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի շենքում: Նախնական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցի նախորդ օրը՝ 2020թ. հունվարի 11-ին: Հանդիպում է եղել ոչ միայն ՎՊԳՔ տնօրենի, այլև Ազգարային համալսարանի շենքի պատասխանատուի հետ: Ուսումնասիրվել են փորձագիտական խմբին տրամադրվող սենյակները, հանդիպումների դահլիճը, քննարկվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը (11.01.2020թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները (ներառյալ՝ միջազգային փորձագետը), համակարգող Լիլիթ Զաքարյանը և թարգմանիչն ունեցել են փակ հանդիպում Վանաձորում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը համաձայնեցրել է փորձագիտական գնահատման շրջանակը, չափանիշների գնահատման սանդղակը, որն ըստ ՈԱԱԿ-ի ընթացակարգերի՝ ներառում է երկու մակարդակ՝ 1) բավարարում/համապատասխանում է չափանիշի պահանջներին, 2) չի բավարարում/համապատասխանում չափանիշի պահանջներին: Վերջնականացվել են այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, հաստատության ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հանդիպումների վարման էթիկան, հստակեցվել են հետագա քայլերը: Միջազգային փորձագետին ներկայացվել է Հայաստանի միջին մասնագիտական կրթության համակարգը և քոլեջի կառավարման, ՄԿԾ-ների մշակման և իրականացման առանձնահատկությունները:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2020թ.-ի հունվարի 12-ից 14-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը մեկնարկել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոս, ուսանող, շրջանավարտ, գործատու, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի մասնակիցներին ընտրել է փորձագիտական խումբը՝ քոլեջի կողմից նախօրոք տրամադրված ցանկերից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը անց է կացրել փաստաթղթերի ուսումնասիրություն[2], իրականացրել է ֆոկուս խմբային հանդիպումներ, հանդիպել տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների հետ: Այցը համընկել է Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրասպորտում/ 3-րդ կուրսի արտադրական պրակտիկայի հետ, այդ պատճառով փորձագիտական խումբը այց է կատարել պրակտիկայի վայր՝ Վանաձորի ավտոկայան: Քանի որ քոլեջի շենքը այցի ընթացքում գտնվում էր կապիտալ վերանորոգման մեջ, ընթացակարգով նախատեսված ռեսուրսների դիտարկման փոխարեն փորձագիտական խումբն այցելել է շինարարության մեջ գտնվող քոլեջի շենք, դիտարկել քոլեջի կորպուսները, ծանոթացել նախագծին: Ըստ շինարարական խմբի հետ կնքված պայմանագրի շենքը պետք է գործարկման հանձնվի 2021թ.:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների հետ բաց և անկեղծ քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության՝ նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական այցից հետո փորձագիտական խումբը քննարկումների արդյունքում պատրաստել է հավատարմագրման զեկույցը, որը կազմելիս հիմնվել է քոլեջի ինքնավերլուծության գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Խմբի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ղեկավարը գործընթացի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դիտարկումների շարադրման գործում, ինչպես նաև արձագանքել ամբողջական տարբերակին: Փորձագիտական խմբի անդամների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփափման ժամանակ: Զեկույցը ամբողջականացնելիս փորձագիտական խմբի ղեկավարը նաև հաշվի է առել միջազգային փորձագետի կողմից հայտնած կարծիքը յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ, նրա գնահատականները և խորհրդատվությունները: Փորձագիտական խումբը վերջնականացրել է զեկույցը՝ հիմնվելով ՄՈՒՀ-ի կողմից ստացված դիտողությունների վրա:

Լիլիթ Զաքարյան,
համակարգող

24.01.2020

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջն ունի 95-ամյա պատմություն: Այն բացվել է 1925 թ. որպես գյուղատնտեսական դպրոց, վերածվել կոլտնտուսի, հետագայում վերափոխվել գյուղատնտեսական տեխնիկումի: 2001 թվականին քոլեջը վերակազմավորվել և վերանվանվել «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ՝ միաձուլվելով 1958թ.-ն հիմնադրված «Վանաձորի գյուղական շինարարական պետական քոլեջին»: ՎՊԳՔ-ն ունի ձևակերպված առաքելություն. «Քոլեջը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պատրաստում է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ գյուղատնտեսության ոլորտի և այլ ոլորտների որակյալ մասնագետներ»: Կրթական գործունեությունը իրականացվում է է կրթական պետական չափորոշիչներով, քոլեջի առաքելությունը, նպատակները և խնդիրները հիմնականում համապատասխանում են ՈԱԾ-ին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ առաքելությունը մշակելիս քոլեջում քննարկումներ են կազմակերպվել, տնօրենը մի քանի անգամ այդ հարցի շուրջ զրուցել է արտաքին շահակիցների հետ, ճշտել տարածաշրջանում առկա մասնագիտությունների կարիքը: Դասախոսները և ուսանողները քննարկումներին մասնակցել են տարբեր խորհուրդների մեջ ընդգրկված լինելու միջոցով: Հարցը քննարկվել է տնօրինական խորհրդում: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ թե՛ ներքին /կառավարման մարմիններ, դասախոսներ, ուսանողներ/, թե՛ արտաքին շահակիցները /գործատուներ, շրջանավարտներ/ գիտակցում և պատկերացնում են ՎՊԳՔ-ի՝ որպես մարզային մասնագիտական ուսումնական հաստատության, առաքելությունը, դերն ու կարևորությունը մարզի համար և որոշակի ակնկալիքներ ունեն հատկապես գյուղատնտեսական ոլորտում: Քոլեջի դերակատարումը մարզում կարևորվում է նաև սոցիալապես անապահով խավին անվճար կրթություն ստանալու հնարավորության ապահովման տեսանկյունից: Քոլեջի Խորհրդի կազմի հետ հանդիպման ընթացքում հաստատվեց, որ գյուղատնտեսությունը մարզի կարևոր ուղղություններից է և քոլեջի դերը դրանով է պայմանավորված՝ մարզում կան անասնապահական ֆերմաներ, կա խելացի գոմերի ծրագիր, կաթ-կաթնամթերքի փոքր ձեռնարկություններ, որոնք որակյալ կադրերի կարիք ունեն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի առաքելությունը կարելի է ավելի հստակեցնել և «գյուղատնտեսական ոլորտի և այլ ոլորտների» ընդհանուր ձևակերպումը վերաձևակերպվել այնպես, այն արտահայտի իրականում շնորհվող որակավորումների բովանդակությունը:

Քոլեջի առաքելությունից բխող նպատակներն ու խնդիրներն ամրագրված են Քոլեջի 2017-2021թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որտեղ նաև սահմանված են ռազմավարական առաջնահերթությունները, խնդիրները և դրանց լուծման քայլերը:
Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակները 6-ն են.

- ✓ Կողմնորոշված դիմորդներ և ուսումնառողներ
- ✓ Որակյալ կրթություն
- ✓ Որակյալ կադրային ներուժ
- ✓ Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում, ժամանակակից ենթակառուցվածք
- ✓ Որակի ապահովում

✓ Սոցիալ – դաստիարակչական գործունեություն:

ՌԾ նպատակներից երևում է, որ քոլեջը դեռևս չունի պարզորոշ պատկերացում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ, այլապես «Որակի ապահովումը» որպես առանձին նպատակ չէր առանձնացվի, հաշվի առնելով այն, որ թե՛ քոլեջի ընդհանուր կառավարումը, թե՛ մասնագիտական ծրագրերի իրականացումը պետք է իրագործվեն որակի ապահովման շրջափուլով: Ռազմավարական ծրագրում ներառված չէ նաև ֆինանսական ռեսուրսների պլանավորումը, ինչը ֆինանսական հիմնավորում չի ապահովում ռազմավարական ծրագրի իրագործման համար:

ՌԾ նպատակներին հասնելու համար քոլեջն իր առջև դրել է 12 խնդիր, մշակվել են առանձին գործողություններ և պլան-ժամանակացույց: Փորձագիտական խմբի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործունեությունը պլանավորում և իրականացնում են՝ հիմք ընդունելով ռազմավարական ծրագիրն ու պլան-ժամանակացույցը: Սակայն փորձագիտական խմբի կարծիքով, գործողությունների իրականացման ժամկետները հստակեցված չեն՝ չափազանց երկար ժամանակահատված են ընդգրկում, ՌԾ վերջնարդյունքների գնահատման համար սահմանված չեն չափելի՝ քանակական և որակական գնահատման ցուցիչներ:

Քոլեջը մշակել է «Շահակիցների գնահատման կարգ», որում որպես արտաքին շահակից է դիտում շրջանավարտներին և գործատուներին, իսկ ներքին շահակից՝ ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին: Հաշվի առնելով դիմորդների տարիքը, ուսանողների և տարածաշրջանի դպրոցահասակ երեխաների ծնողներին որպես արտաքին շահակից դիտարկելը, փորձագիտական խմբի կարծիքով, կարող է նպաստել ՎՊԳՔ-ի՝ ուսանողների հավաքագրման և այլ գործընթացների արդյունավետությանը:

Քոլեջը 2018 թ. մշակել է «Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականություն», որով նախատեսվում է արդյունքների գնահատման համար պարբերաբար իրականացնել քոլեջի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների բացահայտում, ֆոկուս խմբերի և հարցումների անցկացում: Տվյալ փաստաթղթում որպես գնահատման գործիք է դիտվում նաև ինքնավերլուծությունը, ինչը կարելի է դիտել որպես քոլեջի՝ արդյունքների գնահատման առաջին փորձ:

Դրական է, որ շահակիցների շրջանում քոլեջը կազմակերպում է հարցումներ ու հանդիպումներ՝ դրանց հիմքում դնելով կրթական կարիքների և մատուցվող կրթական ծառայություններից շահակիցների բավարարվածության բացահայտումը: Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատումը ՎՊԳՔ-ն իրականցնում է տնօրենի ու ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունների վերլուծության միջոցով: Դրանցում ներկայացվում են ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման տեսանկյունից կատարված աշխատանքները, արդյունքում վեր են հանվում բացթողումները, լրացումներ են կատարվում հաջորդ տարվա գործողությունների և ժամկետների մեջ: Քոլեջում մշակվել են հարցաթերթիկներ, որոնց նպատակն է գնահատել իրականացված աշխատանքի համապատասխանությունը նախանշված նպատակներին, սակայն այդ առումով քոլեջը դեռևս մեծ փորձ չունի և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերլուծությունները միշտ չէ, որ նպատակային են իրականացվում, փոփոխությունները երբեմն իրավիճակային են, դեռևս բարելավման հստակ ընթացակարգեր և մեխանիզմեր չեն գործում: Քոլեջը մշակել է «Առաքելության և նպատակների վերանայման քաղաքականություն», որով նախատեսում է վերանայել դրանք յուրաքանչյուր 5 տարին մեկ, անհրաժեշտության դեպքում ավելի շուտ: Փաստաթղթով նախատեսվում է ստեղծել վերանայման համար անհրաժեշտ մեխանիզմները, սակայն դրանք դեռևս չեն մշակվել:

Այսպիսով, փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ, որ ՎՊԳՔ-ն ունի ձևակերպված և ՈԱՇ-ին համահունչ առաքելություն, քոլեջի նպատակներն ու խնդիրները

արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, քոլեջը կանոնակարգել է առաքելության և նպատակների մշակման, իրականացման, գնահատման գործընթացները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՎՔՊՀ կառավարումն իրականացվում է կառավարման միանձնյա և կոլեգիալ սկզբունքների համադրությամբ՝ ՀՀ սահմանադրության, օրենսդրության, քոլեջի կանոնադրության, կառավարման մարմինների կանոնակարգերի և աշխատակարգերի հիման վրա: ՎՊԳՔ կոլեգիալ կառավարման մարմինը կառավարման խորհուրդն է, որը կազմավորվում է 5 տարով, քոլեջի ընթացիկ գործունեության կառավարումն իրականացնում է տնօրենը: Քոլեջի կառավարումն իրականացվում է տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդների աջակցությամբ, որոնց հիմնական նպատակը խորհրդատվական աջակցություն ապահովելն է: Դրանցից յուրաքանչյուրը կազմավորվում և գործում է 1 տարի ժամկետով՝ համապատասխան կանոնադրության հիման վրա և ապահովում է խորհրդատվական աջակցություն կառավարման համապատասխան օղակին: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջի բոլոր ստորաբաժանումների, խորհուրդների կարգերը մշակված են: Տնօրենն ունի 3 տեղակալներ՝ ուսումնական, դաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքների գծով, որոնք համակարգում են իրենց ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների աշխատանքները:

Փորձագիտական խումբը փաստում է, որ մանկավարժական կոլեկտիվը փոքրաթիվ է և միևնույն մարդու ներգրավվածությունը տարբեր խորհուրդներում և կառավարման օղակներում հանգեցնում է նրանց՝ գործընթացների վերաբերյալ բազմաչափ տեղեկատվության տիրապետմանը և որոշումների կայացման գործընթացներին անմիջական մասնակցությանը: Թեև ուսանողները ներկայացված են կառավարման խորհրդում, սակայն խորհրդի կազմի հետ հանդիպումից տպավորություն ստեղծվեց, որ նրանք այդքան էլ ակտիվ չեն մասնակցում: ՈւԽ-ն առավելապես զբաղվում է մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպմամբ, իսկ ուսանողների բարձրացրած խնդիրները ղեկավարությանը հասնում են կուրսղեկի ինստիտուտի միջոցով: Արտաքին շահակիցները նույնպես մասնակցում են որոշումների կայացման գործընթացներին, մասնավորապես քոլեջը համագործակցում է որոշ գործատուների, շրջանավարտների, հաստատությունների հետ, օրինակ, Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի, որի տնօրենը կառավարման խորհրդի նախագահն է: Քոլեջում որոշումների կայացման գործընթացները կանոնակարգվում են էթիկայի կանոնագրով սահմանված կանոններին համապատասխան:

Կրթական և այլ նպատակների համար ֆինանսավորումը քոլեջը ստանում է պետական բյուջեից՝ պետական պատվերով սովորող ուսանողների թվին համապատասխան: Մուտքի բյուջեն ձևավորվում է նաև վճարովի ուսանողների վարձերից, սակայն փորձագիտական այցի պահին այդպիսի ուսանողներ քոլեջը չուներ: Ինչպես պարզ դարձավ ներքին շահակիցների հետ հանդիպումներից, կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով քոլեջն ապահովված է, սակայն նյութական և ֆինանսական ռեսուրսների հետ կապված խնդիրներ կան:

ՎՊԳՔ-ն իրականացնում է երկարաժամկետ պլանավորում քոլեջի ռազմավարական ծրագրի համաձայն, որը կազմվում է 5 տարվա համար, և կարճաժամկետ պլանավորում՝ տարեկան ծրագրերը, որոնք կազմվում են ըստ ռազմավարական պլանի: Գնահատումն իրականացվում է տարեկան հաշվետվությունների միջոցով, գնահատման չափանիշը համարվում է պլանով նախատեսված գործողության իրականացված կամ չկատարված լինելը: Պետք է նկատել, որ միջնաժամկետ ծրագրեր քոլեջը չունի, իսկ 2017-2021թթ. ծրագիրն ընթացքում է, հետևաբար ՌԾ վերջնարդյունքների վերջնական գնահատման համար դեռևս վաղ է:

Երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշտադիտարման և գնահատման համար արդյունավետ կլիներ մշակել արդյունքների գնահատման հստակ չափելի քանակական և որակական ցուցիչներ, որոնք հնարավորություն կտային քոլեջին առավել հավաստի տվյալների հիման վրա գնահատել իրենց աշխատանքի արդյունավետությունը:

Որոշումներ կայացնելիս քոլեջը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ՝ մասնավորապես նոր մասնագիտական կրթական ծրագրեր ներդնելիս ուսումնասիրել են Լոռու մարզի սոցիալ-տնտեսական ծրագիրը, ՀՀ կառավարության ծրագրի ռազմավարական առաջնահերթությունները, հեռախոսային հարցումներ են իրականացրել գործատուների շրջանում, որոնց վերլուծության արդյունքում բացվել են նոր գյուղատնտեսական մասնագիտություններ՝ մեղվաբուծություն, կաթ-կաթնամթերքի տեխնոլոգիա և անասնաբուժություն: Սակայն քոլեջին չի հաջողվել հավաքագրել անհրաժեշտ քանակով դիմորդներ և լիազոր մարմնից ֆինանսավորում չտրամադրվելու պատճառով այդ մասնագիտություններով ներկայումս ուսումնական գործընթաց չի կազմակերպվում: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջին գնուղատնտեսական մասնագիտությունների կայացման գործում կարող էր օգնել արտաբյուջետային միջոցների առկայությունը, ինչը հնարավորություն կտար քոլեջին սկզբնական փուլում նշված մասնագիտությունները գործարկել սեփական միջոցներով, պետական չափորոշչով սահմանված ուսանողների անհրաժեշտ քանակը չապահովվելու դեպքում:

Քոլեջը վերջին 2 տարիների ընթացքում է սկսել որակի կառավարման սկզբունքների աստիճանական ներդրումն իր քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության գործընթացներում: Ընդ որում, որակի ապահովման համակարգի ներդրման համար Լիազոր մարմնի կողմից այցի պահին դեռևս հատկացված չէին ՈԱ համար հաստիքներ, ֆինանսական ռեսուրսներ, և գործընթանցն իրականացվում էր հասարակական հիմունքներով, ընդ որում այդ պարտականությունները դրված էին առանց այդ էլ մեծ զբաղվածություն ունեցող աշխատակիցների վրա: Որակի ապահովման պատասխանատուի և հանձնաժողովների անդամների հետ հանդիպման ժամանակ չնշվեցին գործընթացների կառավարման ՊԻՄԲ փուլը փակած գործընթացների օրինակներ. առկա է պլանավորում, իրականացում, կան դրանց վերաբերյալ հարցումներ, վերլուծություններ, սակայն որակի գնահատման գործիքակազմը դեռ համակարգված և ամբողջական չէ, հարցումների նպատակը հաճախ հստակ չէ, վերլուծությունները խորքային չեն, հետևաբար վերլուծությունների արդյունքները բերում են իրավիճակային փոփոխությունների՝ չվերածվելով բարելավման հստակ մեխանիզմների:

ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող գործընթացներ, սակայն դրանք դեռևս մեխանիզմների չեն վերածվել: Քոլեջի համար արդյունավետ կլիներ բենչմարքինքի քաղաքականության ներդրումը և կրթական գործընթացների արդյունավետության գնահատումը՝ այս գործիքի միջոցով:

Քոլեջում դեռևս ներդրված չեն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող

օբյեկտիվ մեխանիզմներ, չնայած որ, որոշ ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացվում են:

Այսպիսով, քոլեջի կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան: ՎՊԳՔ-ն կրթական նպատակների համար ունի անհրաժեշտ մարդկային և սահմանափակ նյութական և ֆինանսական ռեսուրսներ: ՎՊԳՔ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, կիրառվում են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մեխանիզմներ: Ղեկավարությունը որոշումներ կայացնելիս կիրառում է քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության որոշ մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է բավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՎՊԳՔ-ի լիցենզավորված մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը: ՎՊԳՔ-ն լիցենզիա ունի միջին մասնագիտական 9 կրթական ծրագրերի համար. Գյուղատնտեսագիտություն, Հաշվապահական հաշվառում, Մենեջմենթ /կառավարում, Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրասպորտում/, Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում, Համակարգչային գեղարվեստական նախագծում, Կաթ-կաթնամթերքի տեխնոլոգիա, Անասնաբուժություն, Մեղվաբուծություն: Դրանք համապատասխանում են քոլեջի առաքելությանը՝ «տարածաշրջանում գյուղատնտեսության ոլորտի և այլ ոլորտների ... միջին մասնագիտական կրթական ծրագրերով որակյալ մասնագետների պատրաստում»: Վերոնշյալ բոլոր մասնագիտությունների համար կան պետական կրթական չափորոշիչներ: Պետք է նկատել, որ գյուղատնտեսական ոլորտի մասնագիտություններից 3-ը քոլեջը բացել է 1 տարի առաջ՝ հաշվի առնելով տարածաշրջանի կարիքները: Մինչ այդ քոլեջի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ռազմավարական առաջնահերթությունները և ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարությունը, քննարկումներ են կազմակերպվել տարածաշրջանի գործատուների, մարզպետարանի համապատասխան ոլորտների պատասխանատուների հետ:

Չնայած մասնագիտությունների մոդուլային ծրագրերի և ուսումնական պլանների հիմքը պետական կրթական չափորոշիչներն են, փորձագետների կարծիքով ուսումնական պլաններում և մոդուլային ուսումնական ծրագրերում կան որոշ բացթողումներ: Մասնավորապես՝ մոդուլային ուսումնական ծրագրերում բացակայում են ծրագրային մանրամասները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել յուրաքանչյուր արդյունքի ուսուցման համար պահանջվող թեմաների, հարցախմբերի տեսքով: Մինչդեռ այդ ձևաչափով մանրամասների ներկայացումը ավելի է հստակեցնում դասախոսի աշխատանքը և հեշտացնում արտաքին գնահատումը:

Քոլեջի ինքնավերլուծության մեջ նշվում է, որ մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, վերանայման աշխատանքներին մասնակցում են համապատասխան շահակիցներ՝ ուսանողներ, դասախոսներ, գործատուներ և այլոք, սակայն հանդիպումներից պարզ դարձավ,

որ նրանց մասնակցությունը կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներին հնարավոր է միայն առարկայական ծրագրերի բովանդակությունը մշակելու մակարդակում, քանի որ քոլեջի կրթական ծրագրերը տրամադրում է ՄԿՈՒԶԱԿ-ը: Փորձագիտական խմբի կարծիքով, քոլեջի մասնագիտական առարկայական ծրագրերի մշակման ու վերանայման գործընթացը կշահեր հատկապես գործատուների և շրջանավարտների առավել ակտիվ ներգրավման և աշխատաշուկայի կարիքները հաշվի առնելու դեպքում:

Քոլեջն ունի չորս գյուղատնտեսական կրթական ծրագրեր իրականացնելու գործունեության թույլտվություն՝ լիցենզիա, սակայն դրանցից երեքի գծով ընդունելություն չի իրականացվում, քանի որ, դիմորդներ չեն եղել: Քոլեջի աշխատակիցների կարծիքով դրա պատճառներից մեկն այն է, որ գյուղից եկած երիտասարդներն ավելի ժամանակակից մասնագիտությունների են ձգտում, չեն ցանկանում վերադառնալ գյուղ, որովհետև հեռանկար չեն տեսնում: Սակայն արտաքին շահակիցների հետ հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ նշված մասնագիտությունները իսկապես պահանջված են մարզում և փորձագիտական խմբի կարծիքով քոլեջը պետք է էլ ավելի ընդլայնի իր մասնագիտական կողմնորոշման աշխատանքները՝ խորհրդատվություն մատուցելով նաև դիմորդների ծնողներին: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը արդեն սկսել է այդ ուղղությամբ աշխատել՝ վերջին շրջանում քոլեջի աշխատակիցները դպրոցներ գնալիս մասնակցել են նաև ծնողական ժողովների:

Քոլեջն իրականացնում է մոդուլային ուսուցում, որի պարտադիր պայմաններից են լաբորատորիաների, մասնագիտական կաբինետների, համակարգչային լսարանների առկայությունը և հագեցվածությունը: Ուսանողների և շրջանավարտների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ կա լաբորատոր, նորարարական տեխնոլոգիաների, գրադարանային ֆոնդի պակաս, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ կրթության որակի վրա: Նշված բացերը քոլեջը փորձում է լրացնել բարձրորակ մասնագետների և պրակտիկայի բազաների օգտագործման միջոցով: Շենքային անբարենպաստ պայմանները խոչընդոտ են հանդիսացել քոլեջի ղեկավարության համար ռեսուրսներ հայթայթելու ուղղությամբ ավելի ակտիվ աշխատելու համար: Քոլեջի ղեկավարությունը լիահույս է, որ շենքի վերակառուցման աշխատանքների ավարտից հետո իրենք ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ գտնելու և նյութատեխնիկական բազան բարելավելու նոր հնարավորություններ կունենան:

ՎՊԳՔ-ում մշակվել է «Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը, որում ներառված է նաև ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը: Փաստաթղթում նշվում է, որ մեթոդի ընտրությունը «կախված է դասավանդող առարկայի /մոդուլի/ առանձնահատկություններից և սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից», սակայն ընտրության մեխանիզմները մանրամասն նկարագրված չեն: Քոլեջում մշակվել է նաև «Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ»: Սակայն ինքնավերլուծության մեջ բոլոր ակնկալվող արդյունքների համար գրված էին նույն դասավանդման և ուսումնառության մեթոդները, ինչը հարցականի տակ էր դնում դրանց արժանահավատությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի ընթացքում ուսանողների, դասախոսների հետ հանդիպումներից և դասալսումից պարզ դարձավ, որ դասավանդման մեթոդները բազմազան են, քոլեջում կիրառվում են դասավանդման ինտերակտիվ մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման համակարգի ներդրմանը: Ողջունելի է այն, որ փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ուսումնառության նյութերում պահպանված են հակիրճությունը, հասանելիությունը, գերակշռում են ուսանողների համար ինքնուրույն գործնական առաջադրանքները, հստակ սահմանված է դասի նպատակը: Միևնույն ժամանակ, շրջանավարտների և ուսանողների հետ հանդիպումից պարզվեց, որ ուսումնական գործընթացում, չնայած մոդուլներին համապատասխան մշակված ուսումնառության նյութերի

առկայությանը, դասի ժամանակ դասախոսներն հաճախ օգտագործում են ավանդական՝ դասախոսությունների թելադրման մեթոդը, որն, ըստ հարցվողների, հոգնեցուցիչ է և խանգարում է ավելի շատ գործնական հմտությունների ձեռքբերմանը: Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում. «ներկայումս քոլեջը գտնվում է կրթական ծրագրերի վերանայման, բարելավման և ընդհանուր բարեփոխումների շրջանում, ... դասավանդման և ուսումնառության մեթոդների, նյութերի և ռեսուրսների արդիականացման գործընթացը ևս գտնվում է մշակման, քննարկման և վերլուծության փուլում»:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը և դասախոսական կազմը գիտակցում են դասապրոցեսի թույլ կողմերը և վճռական են տրամադրված դրանք բարելավելու համար: Այս գործընթացին նպաստում են նաև դասախոսների մեթոդական վերապատրաստումները:

ՎՊԳՔ-ում մշակվել են «Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման կանոնակարգ-ընթացակարգ» և «Ակադեմիական ազնվության կարգ» փաստաթղթերը: Դրական է, որ պետական ատեստավորման և միջանկյալ գնահատման ընթացքում քոլեջը կարևորում է ակադեմիական ազնվության համար սահմանված բոլոր նորմերը, սակայն գրագողության դեմ պայքարի մեխանիզմները դեռևս հուսալի չեն: Միևնույն ժամանակ, դասխոսների և ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների մի մասը գրագողությունը բացառելու համար դիմում է բազմաթիվ հնարքների. ստեղծում են գնահատման թերթիկների մի քանի տարբերակներ, խրախուսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը:

Քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր առայժմ չկան: ՎՊԳՔ-ը վերջին տարիներին մասնագիտական կրթական ծրագրերի համեմատության, փորձի փոխանակման համար չի համագործակցել ՀՀ տարածքում գործող նմանատիպ քոլեջների հետ:

Ըստ քոլեջի տրամադրած նյութերի, միջազգային որևէ ուսումնական հաստատության հետ կապեր չեն ստեղծված, չունեն տեղեկատվություն արտասահմանում գործող նմանատիպ մասնագիտությունների վերաբերյալ, հետևապես ուսանողների և դասախոսների փոխանակումն ապահովող գործընթացներ դեռևս չեն իրականացվում:

ՎՊԳՔ-ում մշակվել է «Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման ընթացակարգերը և մեխանիզմները» և «Կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման ընթացակարգ» փաստաթղթերը: ՄԿԾ-ի մոնիթորինգը նախատեսում է իրականացնել դասալսումների, ուսանողների և դասախոսների խորհրդակցությունների, ուսանողների և դասախոսների հարցաթերթիկների միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա: Փաստաթղթում ներկայացվում է վերանայման ընթացակարգը:

Այսպիսով, ՎՊԳՔ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են քոլեջի առաքելությանը, դասապրոցեսի ընթացքում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները բազմազան են և նպաստում են ելքային արդյունքների ձևավորմանը, քայլեր են արվում ապահովելու ակադեմիական ազնվությունը: Ուսանողների գնահատումը տեղի է ունենում մշակված կարգի համապատասխան: Քոլեջը ունի չափանիշին վերաբերվող մշակված և հաստատված մի շարք փաստաթղթեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

*ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:*

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՎԳՊՔ-ն-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ. առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է ՀՀ Կառավարության կողմից հաստատած մասնագիտությունների ցանկի և տեղերի համաձայն՝ առանց ընդունելության քննությունների: Ուսանողների ընդունելության և հավաքագրման քաղաքականությունն ամրագրված է քոլեջի ռազմավարական ծրագրի առաջին նպատակում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջն իրականացնում է մի շարք միջոցառումներ՝ ուսանողների հավաքագրման նպատակով. այցելություններ հիմնական և ավագ դպրոցներ, բուկլետների, օրացույցների տպագրություն, մասնագիտական տեսաֆիլմերի նկարահանում, քոլեջի աշխատակիցները մասնակցում են աշխատանքի տոնավաճառների, գովազդների տեղադրում տեղական հեռուստաթերթում: Փորձագիտական այցի շրջանակում կազմակերպված հանդիպումներից պարզ դարձավ, որ դիմորդների թվի ավելացման նպատակով քաղաքի դպրոցներ կազմակերպված այցերին մասնակցում են նաև ուսանողները, սակայն գյուղեր այցելությունները սովորաբար իրականացվում են դասախոսների ու վարչական կազմի անձնական միջոցներով և մեքենաներով, ինչը ուսանողների մասնակցության հնարավորություն չի ապահովում: Արդյունքում, հնարավոր է, տուժում է գյուղերից պոտենցիալ դիմորդների հավաքագրման գործընթացը:

Կազմակերպվող հանդիպումներին ապագա դիմորդները ստանում են անհատական մասնագիտական խորհրդատվություն, ներկայացվում են քոլեջի առավելությունները: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կայքէջի առկայությունը՝ «Դիմորդ» պատուհանով, որը բավականին ակտիվ է գործում՝ պարբերական թարմացումներով: Վերջին շրջանում քոլեջի աշխատակիցները դպրոցներ այցելության ընթացքում քոլեջը ներկայացնում են նաև ծնողական ժողովներում:

4 ուսումնական տարիների տվյալներով դիմորդների աճ է գրանցվել անվճար ուսուցման համակարգում, փոխարենն այս պահին քոլեջը չունի վճարովի ուսուցմամբ որևէ ուսանող: Հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների՝ քոլեջը թողնելու հիմնական պատճառները սոցիալական են. արտագաղթ, աղքատություն, բանակ զորակոչվածների՝ զորացրվելուց հետո ուսումը չշարունակելը և այլն, իսկ քոլեջից ուսանողների հեռացումները պայմանավորված են ներքին կարգապահական կանոնների պարբերական և երկարատև խախտմամբ: Լավ և գերազանց առաջադիմություն ունեցող շրջանավարտները հնարավորություն ունեն շարունակելու կրթությունը համապատասխան մասնագիտությամբ բուհերի 2-րդ կուրսում՝ վճարովի ուսուցմամբ:

ՎՊԳՔ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: Ինքնավերլուծությունից պարզվեց, որ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ և խմբային քննարկումներ ուսանողների հետ: Ուսանողների կարիքների վերհանման նպատակով քոլեջը կիրառում է տարբեր մեխանիզմներ՝ հարցումներ, կայքէջի հետադարձ կապը, ֆեյսբուքյան էջը, մինչ Վանաձորի գյուղատանտեսական ակադեմիայի շենք տեղափոխվելն ունենցել են «Արագ արձագանքման արկղ», որի միջոցով ուսանողները հայտնում էին իրենց դժգոհություններն ու խնդիրները: Ուսանողների շրջանում անցկացվող ուսումնական գործընթացի, առկա ռեսուրսների և կրթական միջավայրի վերաբերյալ հարցումների հիման վրա կատարվում են վերլուծություններ: Սակայն հարցումների արդյունքների վերլուծությունից հետո բարելավման փուլը դեռևս բաց է, շատ դեպքերում վեր հանված խնդիրները ֆինանսական լուծում են պահանջում՝ օրինակ, համակարգչային տեխնիկայի համալրում, գյուղերից եկող

ուսանողների համար փոխադրամիջոցի՝ ավտոբուսի ապահովում և այլն: Խոչընդոտում է դրան նաև ժամանակավորապես սեփական շենքային պայմաններ չունենալը: Բացի այդ ՈԱ գործիքակազմը դեռևս մշակման փուլում է, հարցաշարերը չունեն հստակ մշակված նպատակ և հաճախ չեն թիրախավորում առկա պրոբլեմները: Վերլուծությունները խորքային և համակողմանի բնույթ չեն կրում:

Ուսանողների հետ հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը պարզեց, որ ՎՊԳՔ-ում ուսման արդյունավետության բարձրացման համար չի օգտագործվում լրացուցիչ պարապմունքների մեխանիզմը: Քոլեջում իրականացվում է խորհրդատվական ծառայությունների մատուցում ամփոփիչ ատեստավորումից, պետական քննություններից և կուրսային աշխատանքներից առաջ, ինչն իրականացվում է ըստ ուսումնական պլանի: Խորհրդատվական ծառայություններով հիմնականում զբաղվում են կուրսղեկներն ու ամբիոնի վարիչները, նրանք կազմակերպում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություն՝ տվյալ կիսամյակում առարկայական (ցիկլային) հանձնաժողովի կողմից դասավանդվող առարկաների, մոդուլների գծով: Դրական է, որ քննությունների, դիպլոմային աշխատանքների պաշտպանությունից առաջ իրականացվող խորհրդատվություններն ունեն հստակ մշակված ժամանակացույց:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում չկա վարչակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց: Սակայն ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ուսանողները ցանկացած պահի իրենց հուզող հարցերով կարող են դիմել քոլեջի վարչական անձնակազմին և ուսանողները տեղեկացված են վարչական կազմի կողմից հավելյալ խորհրդատվություն տրամադրելու մասին: Ըստ ժամանակացույցի՝ յուրաքանչյուր հինգշաբթի՝ ժամը 14:00-16:00 տնօրենի մոտ կազմակերպվում է սովորողների ընդունելություն, սակայն ուսանողները նշեցին, որ խնդիրների դեպքում կարող են դիմել ցանկացած պահի: Ըստ փորձագետների, վարչակազմի անմիջական մասնակցությունն ու միջամտությունը դրական ազդեցություն են թողնում ուսանող-քոլեջ փոխհարաբերությունների և փոխադարձ վստահության վրա: Դրական է, որ ուսումնական գործընթացի հետ կապված բոլոր փաստաթղթերը՝ դասացուցակները, քննական գրաֆիկները, ժամանակացույցերը, հայտարարությունները փակցված են տեսանելի վայրում:

ՎՊԳՔ-ն ունի բավական ակտիվ գործող կարիերայի ստորաբաժանում, որը համագործակցում է Ուսանողական խորհրդի հետ: Ուսանողների գերակշռող մասը տեղեկացված և բավարարված է կարիերայի ստորաբաժանման աշխատանքից: Այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումը կազմակերպում է հանդիպումներ Վանաձորի համայնքապետարանի և քոլեջի ուսանողների միջև, քննարկվում են աշխատաշուկայի արդի պահանջները, ուսանողների անհրաժեշտ մասնագիտական հմտությունների շրջանակը: Քոլեջն ունի կարիերայի ստորաբաժանման հստակ կանոնակարգ, տարեկան և կիսամյակային պլան: Դրական է, որ ուսանողների մեծ մասը բավարարված է կարիերայի կենտրոնի ծառայություններից, որը թեև նորաստեղծ է՝ գործում է 2018 թվականից, սակայն տարածաշրջանում արդեն ճանաչված է որպես շրջանավարտ – աշխատաշուկա կապը ամրապնդելու ուղղությամբ կատարված աշխատանքի հաջողված փորձ: Սերտ համագործակցելով զբաղվածության տարածքային կենտրոնի հետ՝ ուսանողները տեղեկացվում են աշխատաշուկայի պահանջների և թափուր աշխատատեղերի մասին, կազմակերպվում են հանդիպումներ շրջանավարտների և ուսանողների միջև հաջողված փորձի փոխանցման նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները մասնակցել են կարճաժամկետ ուսումնական ծրագրերի՝ կազմակերպվել է բիզնես պլանի վերաբերյալ դասընթաց:

Քոլեջը հետազոտությունը չի համարում ռազմավարական առաջնահերթություն, թերևս հետազոտության որոշ տարբեր կուրսային և դիպլոմային աշխատանքները ներառում են, ուսումնառության ընթացքում կան մոդուլներ հետազոտական մեթոդների վերաբերյալ:

Քոլեջի ուսանողների իրավունքներն ու պարտականություններն ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությունում, ուսանողի հետ կնքվող պայմանագրում, ներքին կարգապահական կանոններում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության հատուկ մարմին չկա: Ուսանողների իրավունքների և առաջացած այլ հարցերով կարող է զբաղվել Ուսանողական խորհուրդը, ընդ որում ուսանողները հիմնականում տեղեկացված են ՈՒԽ-ի աշխատանքներից: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրենց խնդիրներով ուսանողները հիմնականում դիմում են կուրսղեկներին և վարչական անձնակազմին: Իսկ Ուսանողական խորհուրդն առավելապես զբաղվում է մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպմամբ:

Ուսանողների շրջանում կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման համար իրականացվում են որոշակի քննարկումներ, դիտարկումներ, հարցումներ: Ուսանողների բարձրացված խնդիրները հնարավորության դեպքում լուծում ստանում են, սակայն հիմնական դժգոհությունը շենքային պայմաններից են և ռեսուրսներից:

Այսպիսով, քոլեջը ուսանողներին հնարավորինս տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՎՊԳՔ-ում մշակվել են «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականություն և ընթացակարգեր», ներքին կարգապահական կանոններ, «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման կանոնակարգ», «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ» փաստաթղթերը: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցից պարզվեց, 2018թ.-ին մշակված «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի հաստատումից հետո եղել են դեպքեր, երբ աշխատանքի են ընդունել դասախոսի՝ չկիրառելով մրցութային կարգը: Քոլեջի կադրերի պատասխանատուն վերոնշյալը բացատրում է միակ մասնակցի դիմելու փաստով, սակայն ընթացակարգը պետք է պահպանվեր ցանկացած թվով մասնակիցների դեպքում:

Դասխոսական անձնակազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանաջները ձևակերպված են նաև տվյալ մասնագիտության կրթական ծրագրերին համապատասխանող կրթական պետական չափորոշիչներում, ըստ որի քոլեջում դասավանդող մասնագետներն ունեն համապատասխան բազային կրթություն, փորձ: Ներկայումս աշխատանքներ են տարվում նաև դասախոսական անձնակազմի համար պաշտոնի նկարագիր ստեղծելու ուղղությամբ, ինչը մեծապես կարող է նպաստել կադրային ներուժի ընտրության թափանցիկության բարձրացմանը:

Քոլեջում դասախոսական կազմի գնահատման համար գործում է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգ», որը նպատակ ունի վերհանել դասախոսական կազմի կրթական գործունեության վերաբերյալ

տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, գնահատումը: Գնահատման ընթացակարգը հիմնված է տրիանգուլյացիայի սկզբունքի վրա՝ դասախոսը գնահատվում է ցիկլային հանձնաժողովների և ուսումնական մասի դասալսումների արդյունքում, ինպես նաև ուսանողական հարցումների միջոցով: Գնահատման ընթացակարգը տնօրինության համար հիմք է հանդիսանում աշխատողի հետ պայմանագրի վերակնքման, երկարաձգման կամ լուծման համար: Դասախոսական անձնակազմի, ուսանողների և շրջանավարտների կարծիքով գնահատման 3 ինքնուրույն գործընթացային բաղադրիչներից 3-րդը, այն է՝ ուսանողների կողմից դասախոսի գնահատումը, ոչ միշտ է օբյեկտիվ, քանի որ ուսանողը ավելի հաճախ գնահատում է դասախոսի մարդկային որակները: Միևնույն ժամանակ, փորձագիտական խմբի կարծիքով, այս բաղադրիչը պակաս կարևոր չէ ուսանողների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման տեսանկյունից, դրա արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է բացատրական աշխատանքներ անցկացնել ուսանողների շրջանում: Քոլեջն անցել է արտաքին գնահատում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից: Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ը քոլեջից պահանջում է վերապատրաստման կարիք ունեցող դասախոսների անվանացանկը և իրականացնում է այց-մոնիթորինգ: Մոնիթորինգի ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ի ներկայացուցիչը ստուգում է քոլեջում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները, մոդուլային ծրագրերը, իրականացնում է դասալսումներ, անհրաժեշտության դեպքում տալիս է անհատական խորհրդատվություն և անցկացնում է վերապատրաստում:

Դրական է, որ դասախոսական կազմը հիմնական աշխատողներ են, սակայն մտահոգիչ է դասախոսների տարիքային կազմը՝ զգացվում է երիտասարդների պակաս: Ուսանողների և շրջանավարտների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանց մեծ մասը քոլեջի ուժեղ կողմ է համարում հենց դասախոսական անձնակազմը: Քոլեջն, ըստ փորձագետների, համալրված է մանկավարժական մեծ փորձ ունեցող նվիրյալներով, միևնույն ժամանակ, խումբը համարում է, որ երիտասարդ դասախոսներով մանկավարժական կոլեկտիվի համալրումը կարող է նպաստել քոլեջի արդիականացման գործընթացներին, բարձրացնել դասախոսական կադրերով ապահովման կայունությունը: Երիտասարդ դասախոսների պակասը բացատրվում է քոլեջում դասավանդելու մոտիվացիայի բացակայությամբ, քանի որ ավագ դպրոցում միևնույն տարիքային խմբին դասավանդող ուսուցիչները զգալիորեն ավելի բարձր են վարձատրվում այն դեպքում, երբ քոլեջում, բացի հանրակրթական առարկաներից ուսուցանվում են մասնագիտական, դասախոսից պրակտիկ գիտելիքներ պահանջող առարկաներ:

Դասախոսների պակասը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ միևնույն դասախոսը միաժամանակ պարապում է 5-ից ավել մասնագիտական մոդուլներ, կամ պարապում է մոդուլներ, որոնք իրար հետ իմաստային կապ չունեն: Այս փաստը կարող է բացասական ազդեցություն թողնել կրթության որակի վրա: Փորձագիտական խումբն առաջարկում է երիտասարդ մասնագետների ներգրավվման ուղղությամբ մշակել հստակ գործողությունների պլան: Արժե այս ուղղությամբ հրավիրել նաև լիազոր մարմնի ուշադրությունը:

2014-2017թթ. վերապատրաստման որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվող դասընթացներում ընդգրկվել է 29 դասավանդող: Հաշվետու ժամանակահատվածում քոլեջն իր միջոցներով և նախաձեռնությամբ դասախոսների համար նաև իրականացրել է համակարգչային օպերատորության և անգլերենի անվճար դասընթացներ: Դրական է, որ քոլեջը կարևորում է դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների վերանայման հարցը, գտնում է, որ շատ անելիքներ կան դասախոսական կազմի բոլոր անդամների մոտ ժամանակակից պահանջներին համապատասխան կարողությունների զարգացման ուղղությամբ, ինչպես նաև՝ դասավանդման գործընթացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված:

Քոլեջը չունի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, սակայն երիտասարդ կադրերի

առաջխաղացման հստակ ուղղվածություն ունի: Փորձագիտական այվցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի սկսնակ դասավանդողների հետ տարվող աշխատանքներն իրականացվում են առարկայական (ցիկլային) հանձնաժողովներում և ուսումնական մասում, ստեղծված է բարենպաստ միջավայր ավագ և փորձառու դասախոսների կողմից սկսնակ դասախոսներին փորձի փոխանցման համար: Փորձագիտական խմբի կարծիքով, քոլեջի համար օգտակար կլիներ մշակել անձնակազմի զարգացման ծրագիր, ինչը մասնագիտական աճի ընթացակարգ և չափանիշներ կսահմաներ և կնպաստեր մասնագիտական ներուժի զարգացմանը:

Քոլեջն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ իր ռազմավարական նպատակներն իրականացնելու համար: Ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի ընտրության համար չկա հատուկ ընթացակարգ: Ուսումնաօժանդակ աշխատողները աշխատանքի են ընդունվում իրենց դիմումի համաձայն՝ թափուր աշխատատեղի մասին տեղեկանալով աշխատաշուկայից, քոլեջի պաշտոնական կայքից, ֆեյսբուքյան էջից: Վարչական աշխատողներին նշանակում է տնօրենը՝ հաշվի առնելով վերջիններիս մասնագիտական որակները: Դրական է այն փաստը, որ աշխատողները մինչ աշխատանքի անցնելը ծանոթանում են աշխատանքի անվտանգության կանոններին, ներքին կարգապահական կանոններին, մշակման փուլում են գտնվում պաշտոնի նկարագրերը: Փորձագիտական խմբի կարծիքով քոլեջի համար պակաս կարևոր չէ բարձր որակավորում ունեցող վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը, ուստի օգտակար կլինի մշակել վերջիններիս ընտրության ընթացակարգ:

Այսպիսով, քոլեջը կրթական ծրագրեր իրականացնելու համար հիմնականում ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող, մոտիվացված, նվիրված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

Չնակերպում՝ ՄՈՒՀ-ի (հապավումը) ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է բավարար/անբավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Քոլեջի առաքելության և նպատակների մեջ հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն չի նշվում, չունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները արտահայտող ծրագրեր: Հետազոտության ուղղությամբ քոլեջը չունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր:

Քոլեջում բացակայում են դասախոսների և ուսումնառողների հետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմները: Չեն նպաստում դրան նաև դասախոսների ցածր աշխատավարձերը և մեծ ծանրաբեռնվածությունը: Արտաբյուջեի բացակայության պայմաններում քոլեջը փոփոխություններ անելու մեծ հնարավորություններ չունի: Այդ պայմաններում բնական է, որ չի կարևորվում նաև հետազոտական գործունեության միջազգայնացումը, չի իրականացվում համագործակցություն տարածաշրջանային և հանրապետության այլ քոլեջների հետ: Մինչդեռ փորձագիտական խմբի կարծիքով, այս մոտեցումը վերանայման կարիք ունի՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակի[3] համաձայն

[3] ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի N 714-N որոշում:

5-րդ մակարդակի շրջանավարտը պետք է կարողանա հավաքագրել, մշակել և վերլուծել մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալներ, մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարել և լուծումներ առաջադրել՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում, ինչն անհնար է առանց հետազոտահեն կրթության: Հետևապես մակարդակի համապատասխան հետազոտական տարրերի ներառումը ուսուցման գործընթացում անհրաժեշտություն է: Ավելին հետազոտական բաղադրիչը ներառված է նաև փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ՊԿՉ-ներում: Օրինակ, 3102 «Գյուղատնտեսագիտություն» ՊԿՉ-ում նշվում է, որ այդ մասնագիտությամբ շրջանավարտն իրականացնում է «Տեխնիկ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի հետազոտության» զբաղմունքը, որ այդ մասնագետի պարտականություններից է «2. հետազոտություններ կատարելը, վայրի բնությունը պահպանելու նոր մեթոդներ մշակելը կամ գործողները կատարելագործելը», մի քանի մոդուլներում հետազոտություն կատարել կարողանալը նշված է որպես ուսումնառության արդյունք:

Թեպետ քոլեջն իր ծրագրերում չի կարևորում հետազոտությունը, սակայն ուսանողներին հանձնարարվում է և նրանք կատարում են կուրսային և ավարտական աշխատանքներ, երբեմն մասնակցում այլ ՄՈՒՀ-երում կազմակերպվող գիտական կոնֆերանսներին: Ավելին փորձագիտական խումբը համոզվեց, որ ուսանողների կուրսային աշխատանքներում, դիպլոմային նախագծերում կան հետազոտական տարրեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց և դրական գնահատվեց նաև այն փաստը, որ մասնագիտական առարկայական (ցիկլային) հանձնաժողովները ձգտում են ընտրել դիպլոմային նախագծերի, կուրսային նախագծերի (աշխատանքների) արդիական թեմաներ:

Քոլեջում հետազոտական բաղադրիչի ներառումը և պատշաճ իրականացումը կարող է նպաստել կրթական ծրագրերի արդիականացմանը, արտաբյուջետային միջոցների գոյացմանը, լավ փորձ հանդիսանալ այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: Դրան կարող է նպաստել դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական աշխատանքների կազմակերպումը, արդյունքների ներդրումը դասավանդման գործընթացում ուսումնառությունը առավել հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար:

Այսպիսով, ՎՊԳՔ-ն հետազոտական գործունեությունը չի համարում ռազմավարական առաջնահերթություն, չունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, դասախոսների և ուսանողների շրջանում բացակայում է հետազոտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՎՊԳՔ-ն ժամանակին ունեցել է հարմարավետ շենք-շինություններ, լաբորատորիաներ, սակայն տարիներ շարունակ դրանք կապիտալ վերանորոգման չեն ենթարկվել, բարոյապես և ֆիզիկապես մաշվել են: Այժմ քոլեջն ունի երեք մասնաշենք՝ երկու ուսումնական (4344 քմ. ընդհանուր մակերեսով), մեկ մարզադահլիճ (648 քմ. ընդհանուր մակերեսով) և էլեկտրական ենթակայան (24,2քմ), որոնք պետական սեփականություն են, որ իրենց սպասարկման

հողատարածքներով անհատույց օգտագործման են հանձնված քոլեջին 22 կառավարության 23.10.2013թ. թիվ 1250-Ա որոշմամբ: 2015թ.-ից համապատասպան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա պետական բյուջեի միջոցներով սկսվել է քոլեջի շենքերի հիմնանորոգումը, որն ընթացել է ուսումնական գործընթացի կազմակերպմանը զուգահեռ: Սույն ուսումնական տարվա սկզբից քոլեջն իր գործունեությունը ծավալում է Վանաձորի ագրարային համալսարանի տարածքում՝ հյուրի կարգավիճակով, մինչ ՎՊԳՔ-ի շենքերի նորոգման աշխատանքների ավարտը, ինչը նախատեսվում է 2021 թվականին: Քոլեջի նորոգվող շենք-շինություններ փորձագետների այցից տպավորությունը հուսադրող չէր. 5 տարի ընթացող նորոգման աշխատանքները շատ հեռու էին ավարտից: Նկատենք սակայն, որ գործընթացի ձգձգման մեղքը քոլեջինը չէ, ավելին դրանց արդյունքում տուժող կողմը հենց քոլեջն է: Ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նրանք այս պահին բավարարված են իրենց տրամադրված շենքային պայմաններից, քանի որ Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի շենքը նորոգված է և ապահովված ջեռուցմամբ:

Այնուամենայնիվ քոլեջի կրթական ծրագրերի իրականացման համար այստեղ չկան անհրաժեշտ ենթակառուցվածքներ, լաբորատորիաներ, իսկ նախկինում ունեցած լաբորատորիաները, սարքավորումները բարոյապես մաշված են և արդիականացման կարիք ունեն: Հյուրընկալած ագրարային համալսարանի շենքում մի քանի տարբեր ստորաբաժանումներ կենտրոնացել են մի սենյակում: Մի լսարանում կենտրոնացրել են լաբորատոր որոշ միջոցներ և մի քանի համակարգիչներ, որոնք, սակայն չունեն համացանցին հասանելիություն:

Պետք է նկատել, որ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների մոտ 92 տոկոսը ուղղվում է աշխատավարձի ֆոնդին, մնացած 8 տոկոսը՝ կոմունալ ծախսերի և անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը: Դրական է, որ վերջին տարիներին խիստ սահմանափակ միջոցների պայմաններում քոլեջը ձեռք է բերել համակարգիչներ և գրասենյակային տեխնիկա:

Ներկայում ՎՊԳՔ-ը չունի վճարովի հիմունքներով ուսումնառող ուսանողներ, արտաբյուջետային միջոցներ չեն ձևավորվում, ինչը մանկավարժական կոլեկտիվը բացատրում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակով, երբ գյուղերից հաճախող ուսանողներն անգամ տրանսպորտային ծախսերի դժվարություն ունեն, միևնույնն ժամանակ քոլեջն իր ուսանողների ուժերով ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու գաղափարները դեռևս չի . իրագործում՝ խոչնդոտը հարկային օրենսդրական կարգավորումներն են:

Փորձագիտական խումբը կարծում է, որ այս պահին կրթական գործընթացների իրականացման համար ռեսուրսները բավարար չեն և քոլեջը մեծ անելիք ունի լրացուցիչ ֆինանսական միջոցներ հայթայթելու գործում: Այս առումով օգտակար կլիներ նախկին շրջանավարտների և գործատուների ներուժի օգտագործումը, միջազգային ծրագրերին մասնակցությունը, ֆոնդերի հայթայթման ուղղությամբ քոլեջի նախաձեռնողականությունը: ՎՊԳՔ-ի ղեկավարությունը մեծ հույսեր է կապում իրեն ամրագրված շենքի նորոգման հետ, որից հետո նախատեսում է լրացուցիչ գումարներ հավաքագրել՝ մասնավորապես մարզադահլիճի վարձակալությամբ տրամադրումից:

Քոլեջում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների կառավարումն իրականացվում է հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, համապատասխան գործավարության կարգի: Լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության հետ փաստաթղաշրջանառությունն իրականացվում է Mullbery փաստաթղթաշրջանառության համակարգով:

Յուրաքանչյուր տարի քոլեջը ձեռք է բերում անհրաժեշտ դեղորայք, առկա է բուժքույրի հաստիք, և շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ քոլեջի շենքում եղել է բուժկաբինետ՝ անհրաժեշտ սարքավորումներով կահավորված: Միևնույն ժամանակ, նախկին շենքը հարմարեցված չի եղել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառությանը: Հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը երբևէ չի ունեցել հատուկ կարիքներով

շահակիցներ, հնարավոր է, որ պատճառը եղել է հենց շենք- շինությունների՝ նման կարիքներով ուսանողների և դասախոսների պահանջներին հարմարեցված չլինելը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հիմնանորոգման ընթացքում հատուկ կարիքներով ուսանողների համար պայմանների ստեղծումը հնարավորություն կտա ավելացնելու ուսանողների թիվը՝ տարածաշրջանում առավելություն ձեռքբերելով մասնագիտական կրթական այլ հաստատությունների նկատմամբ:

Քոլեջը մշակել է ռեսուրսների գնահատման գործիքներ, սակայն դրանց կիրառումը ցույց է տվել, որ դրանք միշտ չէ, որ արժանահավատ են և վերանայման կարիք ունեն: Այսպես, ուսանողների և դասախոսների շրջանում անց են կացվում ռեսուրսներից բավարվածության վերաբերյալ հարցումներ: Արդյունքում ուսանողների 60-70%-ը նշել է, որ բավարարված է ռեսուրսներից, նույն հարցին դրական է պատասխանել դասախոսների 37%-ը: Ռեսուրսներով բավարարված ուսանողների բարձր տոկոսը հավանաբար բացատրվում է շարժունակության պակասով, ինչի արդյունքում նրանց համար հնարավորություն չի ստեղծվել դիտարկելու և համեմատվելու ՀՀ այլ քոլեջների, և հատկապես զարգացած երկրների քոլեջների ռեսուրսների և ենթակառուցվածքների հետ: Դասախոսները, որոնք դասավանդման ընթացքում չունեն անհրաժեշտ ռեսուրսների կիրառման հնարավորություն, տվել են առավել օբյեկտիվ գնահատական: Փորձագիտական այցի ընթացքում տարբեր շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ռեսուրսների պակասը քոլեջի տնօրինությունը փորձում է լրացնել պրակտիկայի անհրաժեշտ բազաների ընտրությամբ:

Այսպիսով, քոլեջին իր առաքելությունն ու նպատակերն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ, բավարար ֆինանսական ռեսուրսներ չի հատկացվում, այն ապահովված չէ անհրաժեշտ սարքավորումներով, ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները ներդրման փուլում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Փորձագիտական խումբն արձանագրեց, որ չնայած քոլեջում ներքին հաշվետվողականության առանձին կարգ մշակված չէ, սակայն առկա է հաշվետվողականության գործող համակարգ: Գործընթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են իրավական ակտերով: Հաշվետվողականության մեխանիզմ են հանդիսանում քոլեջի ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին ամենամյա լսումները՝ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, տնօրենի տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդին, վերադաս և պատասխանատու գերատեսչություններին ներկայացվող հաշվետվությունները: Օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացվում ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը, պետեկամուտների կոմիտեին, վիճակագրական վարչությանն ու այլ պետական գերատեսչություններին:

Քոլեջը, կարևորելով իր ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, կիրառում է տարբեր մեխանիզմներ, այդ թվում քոլեջի պաշտոնական կայքէջը, և սոցցանցերը, որոնք պարբերաբար թարմացվում են ուսանողների

առօրյայի մասին պատմող նյութերով, միջոցառումների մասին պատմող տեքստային և վիդեո կոնտենտով: Քոլեջի ֆեյբուքյան էջում ներկայացված են նաև առցանց հարցումներ ու հայտարարություններ:

Փորձագիտական խումբը համոզվեց, որ քոլեջի կայքէջում վերջին տարվա ընթացքում կատարվել են մեծ աշխատանքներ, և այն հսկայածավալ տեղեկատվություն է տարածում քոլեջի մասին, որի միջոցով դիմորդը կարող է ծանոթանալ քոլեջի մասնագիտություններին, կազմակերպվող միջոցառումներին և ծրագրերին: Կայքում տեղադրված է քոլեջի ռազմավարությունը, կանոնադրությունը, կանոնակարգերը, օրենքները, հրամաններն ու որոշումները, կարելի է ծանոթանալ քոլեջի պատմությանը, ուսխորհրդի կազմին ու կանոնադրությանը, կարիերայի կենտրոնի կանոնակարգին ու գործունեությանը, գտնել քոլեջի կոնտակտային տվյալները: Այնուամենայնիվ, նկատվում է, որ քոլեջի կայքէջը նույնպես ունի բարելավման կարիք՝ որոշ բաժիններ, ինչպես օրինակ, որակի ապահովման և հաշվետվություններ բաժինները դեռևս լրացվելու կարիք ունեն, կայքէջում և սոցցանցում հետադարձ կապի գործիքը դեռևս ամբողջությամբ չի գործարկվում:

ՎՊԳՔ-ի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են մի շարք իրավական ակտերում (ՀՀ օրենք, Քոլեջի կանոնադրություն), ինչպես նաև մի շարք այլ նորմատիվ փաստաթղթերում: ՎՊԳՔի ռազմավարության իրականացման պլանում հստակ և իրատեսորեն սահմանում են տեղեկատվական գործընթացի (մասնավորապես կրթության գործընթացի) կատարելագործման ուղղությունները՝ կայքէջ, բուկլետներ, գովազդային հոլովակներ:

Քոլեջում հետադարձ կապի ապահովման քաղաքականության և մեխանիզմների արդյունավետության առանձին, համակողմանի գնահատում, որպես այդպիսին, դեռևս չի իրականացվում: Սակայն ինքնավերլուծությունից և անձնակազմի պարզաբանումներից պետք է փաստել, որ հետադարձ կապ հաճախ իրականացվում է անձնական կապերի, ծանոթությունների ու նախաձեռնության միջոցով: Առկա են հետադարձ կապի ոչ ֆորմալ կամ չփաստաթղթավորված մեխանիզմներ: Սույն աշխատանքը քոլեջում կատարվում է մեծամասամբ կարիերայի կենտրոնի կողմից:

Յուրաքանչյուր տարի աշխատանքային պլանով հաստատված կարգով քոլեջի կարիերայի կենտրոնը կատարում է խորհրդատվական ծառայություն՝ մասնավորապես դպրոցի ավարտական դասարանների համար մասնագիտական կողմնորոշման դասընթացներ անկացնելով:

Վերջին երկու տարիներին աշխուժացել և կանոնակարգվել են նաև մշակութային, ռազմահայրենասիրական, մարզական միջոցառումները, հանդիպումներն ու բաց դասերը: Քոլեջը փորձում է ստեղծել գիտելիքների փոխանցման մեխանիզմներ:

Այսպիսով, քոլեջը վերջին տարիներին սկսել է զարգացնել հասարակայնության հետ կապերը, ունի հաշվետվողականության համակարգ, ապահովում է իր գործունեության թափանցիկությունը, փորձեր է անում հասարակության հետ ստեղծել հետադարձ կապի հուսալի մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՎՊԳՔ-ն չունի արտաքին կապերի հաստատված քաղաքականություն: Դրա հետ մեկտեղ փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը ունի բազմաթիվ արտաքին գործընկերներ, որոնց հետ կապերը նպաստում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Այսպես, հուշագիր է ստորագրված Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ, որի համաձայն Կենտրոնը պարտավորվում է տրամադրել տեղեկատվություն աշխատաշուկայի առկա և կանխատեսելի թափուր աշխատատեղերի, գործատուների կողմից ներկայացվող պահանջների վերաբերյալ, կազմակերպել և անցկացնել ուսանողների հանդիպումներ ոլորտի մասնագետների, գործատուների հետ, անցկացնել ոչ ֆորմալ դասընթացներ, քոլեջին ներգրավել տոնավաճառներին և ցուցահանդեսներին, օժանդակել քոլեջի կարիերայի կենտրոնին շրջանավարտներին դեպի աշխատաշուկա ուղղորդելու, զբաղվածության պետական ծրագրից օգտվելու հարցերում: Քոլեջը պայմանագրեր ունի կնքած քաղաքի անհատ ձեռներեցների, համայնքներում գործող արոտ օգտագործողների սպառողական կոոպերատիվների, Ստեփանավանի «Գյուղատնտեսական անասնաբուժական սպասարկման կենտրոնի», Երևանի ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի, Վանաձորի «Ռ և Տրանս» ՍՊԸ-ի /գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովման բնագավառում/, Վանաձորի «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի / շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում/, Վանաձորի քաղաքապետարանի և շրջակա գյուղերի գյուղապետարանների, Լոռվա մեղվաբույծներ ՀԿ-ի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Հայաստանի պոլտեխնիկական ազգային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի, համատիրությունների, բազմաթիվ այլ շահակիցների հետ: Տարիներ առաջ ՎՊԳՔ համագործակցել է նաև Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի, Վանաձորի պետական պոլիտեխնիկական քոլեջի, Վանաձորի արվեստի պետական քոլեջի հետ: Ինչպես երևում է կնքված պայմանագրից նախատեսվել է մասնակցել միմյանց կազմակերպվող ուսանողական մրցույթներին, համաժողովներին, կազմակերպել միջքոլեջային վերապատրաստումներ, ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի ստեղծման փորձ, կարիերայի կենտրոնների ստեղծման ուղղությամն փորձի փոխանակում, առկա նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործում: Սակայն վերջին տարիներին այդ կապերը պասիվացել են:

Քոլեջը միջազգայանցումը չի համարում իր ռազմավարական առաջնահերթությունը, սակայն պետք է նկատել, որ առաքելության հետևյալ ձևակերպումը. «քոլեջը, ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, նպաստում է անհատի շարունակական զարգացմանը, ստեղծում է նպաստավոր միջավայր ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու ակտիվ քաղաքացու համակողմանի ձևավորմանը» հնարավոր չէ իրագործել միջազգային զարգացումներից կտրված: Այն ենթադրում է համանման ազգային և արտասահմանյան տարբեր հաստատությունների հետ համագործակցություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և առաջատար հաստատությունների կրթական ծրագրերի և հաջողված փորձի ներդրում:

Փորձագիտական այցի ընթացքում ուսխորհրդի ու կարիերայի կենտրոնի հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նշված օղակները պատրաստվում են կապ հաստատել մարզի մի շարք քոլեջների հետ, ինչպես նաև ունեն հաստատված կապեր ՀՀ մի շարք քոլեջների կարիերայի կենտրոնների հետ, սակայն միջազգային կապերի հաստատման ուղղությամբ քոլեջը դեռևս քայլեր չի ձեռնարկում:

Քոլեջը չունի արտաքին կապերի և միջազգայնացման բաժին կամ պատասխանատու, ով կզբաղվեր միջազգային կապերի հաստատման և ֆոնդերի հայթայթման գործով, ինչը լրացուցիչ ֆինանսական միջոցների հնարավորություն կտար քոլեջին:

Դրական է, որ ՎՊԳՔ-ը առանց պայմանագրերի համագործակցում է որոշ միջազգային կառույցների հետ, ինչի մասին փաստում են տարբեր միջոցառումներին և վերապատրաստման դասընթացներին մասնակցության համար նրանցից ստացած հրավերները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների մեծ մասը տիրապետում է ռուսերենին, և փոքր հատվածը անգլերենին, չնայած կատարվել է ներքին վերապատրաստում, սակայն աշխատակիցների մեծ մասի մոտ անգլերենի իմացությունը սահմանափակում է կարդալ և թարգմանելու շրջանակներում, ինչը բավարար չէ միջազգայնացման համար: Քոլեջում օտար լեզուների ուսուցման համար չեն կիրառվում մոտիվացիոն մեխանիզմներ /արտալսարանային միջոցառումներ, ակումբներ/, մշակված չեն ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզուների նկատմամբ հետաքրքրվածության բարձրացնելու ընթացակարգեր, ինչը չի նպաստում միջազգայնացման գործընթացի ակտիվացմանը:

Այսպիսով, քոլեջում դեռևս չեն գործում արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, առկա չէ արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածք, միջազգային շահակիցների հետ համագործակցությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Որակի ապահովման ներդրման նպատակով մշակվել են «Որակի ապահովման քաղաքականություն» փաստաթուղթը, որը հաստատվել է քոլեջի խորհրդի նիստում 2018 թ.-ի փետրվարի 12-ին: Այն շատ ընդհանրական բնույթ ունի և չի ներառում որակի ապահովման ընթացակարգերը, մեխանիմները և գործիքակազմը: Նույն օրը հաստատվել է նաև «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի Որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգը: Փաստաթղթում ներկայացված են ՈԱ կենտրոնի խնդիրները և գործառույթները: Ըստ կանոնակարգի քոլեջի տնօրենը նշանակում է կենտրոնի պատասխանատուին, որը պետք է համակարգի հանձնաժողովների գործունեությունը: Որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար ձևավորված են 3 հանձնաժողովներ՝ տեխնիկական, ուսումնամեթոդական և ուսանողական: ՈԱ համակարգի գործունեությունը միտված է քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայությունների բարելավմանը, քաղաքականությունը բխում է քոլեջի առաքելությունից, որի նպատակն է աջակցել բարձրորակ, աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստմանը: Փաստաթուղթը համակողմանի և ճիշտ է արտացոլում որակի նորիքան ապահովման կառույցի գործառույթները: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբն արձանագրեց, որ փաստաթուղթը դեռևս չի իրագործվում՝ քոլեջում առկա չէ որակի ապահովման առանձին ստորաբաժանում և գործընթացի ապահովման համար չեն նախատեսվում առանձին

ֆինանսական ռեսուրսներ: Փորձագիտական այցի պահին լիազոր մարմինը դեռևս չէր նախատեսում հաստիք՝ որակի ապահովման նպատակով: Այդ գործառույթն իրականացնելու համար տնօրենի կողմից նշանակվել է որակի ապահովման պատասխանատու, ով նաև ուսումնամեթոդական աշխատանքների գծով փոխտնօրենն է, ինչն ըստ փորձագիտական խմբի, չափազանց մեծ ծանրաբեռնվածություն է միևնույն անձի համար և, նույնիսկ մեծ ցանկության դեպքում, հնարավոր չէ իրականացնել անհրաժեշտ ծավալով: Բացի այդ մեկ աշխատակիցը չի կարող լիարժեք կերպով համակարգել 3 հանձնաժողովների աշխատանքը: Քանի որ քոլեջի դասախոսական անձնակազմը մեծ չէ, աշխատանքային խմբի բոլոր անդամները ունեն այլ զբաղվածություններ, ըստ փորձագիտական խմբի, աշխատանքային գործընթացի շատ փոքր մասն է տրամադրվում ՈԱ աշխատանքներին: Բացի այդ, որակի պատասխանատուն և հանձնաժողոների անդամները նշված աշխատանքն իրականացվում են հասարակակական հիմունքներով, ինչը, փորձագիտական խմբի կարծիքով, չի նպաստում որակի համակարգի ներդրմանը:

Քոլեջի ներքին շահակիցները, տեղեկացված և ներգրավված են որակի գործընթացներում, այն դեպքում, երբ արտաքին շահակիցները ներգրավված են միայն հարցումներին մասնակցության ձևով:

Վերոնշյալ կանոնադրությամբ նախատեսվում է ստեղծել ՈԱ գործիքակազմ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ գործընթացների վերաբերյալ որոշ հարցումներ կատարվում են, սակայն դրանց նպատակները հստակեցված չեն, վերլուծությունները խորքային և համակողմանի չեն և դրանք դեռևս չեն կարող հիմք հանդիսանալ բարելավման պլանավորման համար:

Քոլեջի կայքէջում դեռևս տեղադրված չէ տեղեկատվություն, հաշվետվություններ ՈԱ աշխատանքների շուրջ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը գիտակցում է շահակիցների շրջանում որակի ապահովման վերաբերյալ տեղեկատվության շրջանառման կարևորությունը և նախատեսում է աշխատանքներ այս ուղղությամբ :

Փորձագիտական խմբի կարծիքով, որակի մշակույթը քոլեջում դեռևս ձևավորված չէ և գործընթացներն իրականացվում են նվիրյալ աշխատակիցների էնտուզիազմի շնորհիվ:

Այսպիսով, թեև քոլեջում ստեղծվել են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր, դրանց կիրառումը դեռևս լիարժեք չէ: Քոլեջի քաղաքականությունը և ընթացակարգերի վարչարարությունը դեռևս ամբողջապես չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով՝ գնահատման և բարելավման գործընթացները լիարժեք չեն: Քոլեջում չի մշակված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն: Այս ուղղությամբ առանձին աշխատանքներ տարվում են, սակայն դրանք համակարգման կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

*ՎՊԳՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:*

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար
2. Կառավարում և վարչարարություն	Բավարար
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար
4. Ուսանողներ	Բավարար
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Անբավարար
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարար
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

Օր/ամիս/տարեթիվ 29.01.2020

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մարգարիտա Ռեմիկի Պողոսյանը 1995 թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ինֆորմատիկայի և ԿԱՀ ֆակուլտետը՝ ինժեներ-տնտեսագետի որակավորմամբ: 2008-2012 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հայցորդ: 2015-2016 թթ. սովորել է Եվրոպայի Խորհրդի Քաղաքական դասընթացների Երևանյան դպրոցում, 2017-ին անցել է դասընթաց Եվրոպայի խորհրդի Քաղաքական հետազոտությունների Մոսկվայի կենտրոնում: 2004-2015 թթ. աշխատել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հասարակագիտության ամբիոնում սկզբում որպես դասախոս, այնուհետև ասիստենտ: 2006-ից մինչ այսօր համատեղությամբ աշխատում է Երևանի Հյուսիսային Համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում որպես դասախոս, իսկ 2013-2014 թթ՝ որպես նույն ամբիոնի վարիչ: 2015-2019թթ. Եղել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության բյուջետային ֆինանսավարման և ծրագրերի համակարգման վարչության ծրագրերի համակարգման և գնումների բաժնի պետ, 2019-ից ՀՀ պետական վերհսկողական ծառայության գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժնի պետի պաշտոնակատար, 2019-ից համատեղության կարգով նաև ՀՊՏՀ-ի կառավարման ամբիոնի ասիստենտ: 2015թ.-ից տնտեսագիտական գիտությունների թեկնածու է: Մասնակցել է որակի ապահովման թեմայով վերապատրաստումների ՈԱԱԿ-ում և Ջերմուկում միջազգային սեմինարի ընթացքում:

Ռոլֆ Օթթո Կուդենբուրը 1980թ. ավարտել է Գերմանիայի Ս. Հանովերի համալսարանը՝ այգեգործական գիտությունների մասնագետի որակավորմամբ՝ պաշտպանելով դիսերտացիան "Բույսերի սնուցում" թեմայով: 1980-1984 թթ եղել է ասպիրանտուրայի ուսանող Հանովերի համալսարանում, 1983-ից Գեորգ Օգոստոս համալսարանում, Գյուտինգեն, Գերմանիա: 1984թ ստացել է գյուղատնտեսական գիտությունների դոկտորի աստիճան: 1984-1987թթ. աշխատել է Գյոթինգենի Գեորգ Օգոստոսի անվան «Գյուղատնտեսական քիմիայի ինստիտուտ»-ում որպես ավագ մասնագետ: 1985 - 1986 թթ, հետդոկտորական ուսումնասիրություններ է անցկացրել Փուրդուի համալսարանում, արևմտյան Լաֆայետ, Ինդիանա, ԱՄՆ: 1987-1991 թթ. աշխատել է որպես հետազոտող, դաշտային փորձարկումների ղեկավար BASF SE (գյուղատնտեսական հետազոտական կենտրոն) ընկերության բույսերի պաշտպանության մասնաճյուղում, Լիմֆուրգերհոֆ, Գերմանիա: 1991-1992 աշխատել է որպես ավագ մասնագետ Բույսերի սնուցման ինստիտուտում, Մյունխեն-Ուեյնեստեֆան տեխնիկական համալսարան, Գերմանիա: 1992-1999 աշխատել է Großbeeren/Erfurt V.-ում (Բանջարեղենային և դեկորատիվ մշակաբույսերի ինստիտուտ,) մինչև 10/1998 թ-ը՝ նույն ինստիտուտում՝ որպես գիտական գծով ղեկավար: 1999-2004 թթ. աշխատել է Լանդշաֆտի և հողօգտագործման հետազոտությունների կենտրոնում, (ZALF) Մյունխենբուրգ, Գերմանիա, 1999-2004թթ. եղել է հրավիրված գիտնական Գրիֆին Քեմթուս Վրացական Համալսարանում: 2004-2011թթ. աշխատել է Lufa Restock լաբորատորիայում որպես տնօրեն՝ իրականացնելով խորհրդատվական, հետազատական աշխատանքներ, նույն թվականներին աշխատել է Ռոստոկի համալսարանում որպես դասախոս: 2011 թ.-ից որպես խորհրդատու զբաղվել է անհատ ձեռներեցությամբ (www.agrarknowhow.com): Նույն թվականից որպես հրավիրված դասախոս դասավանդել է Ռոստոկի համալսարանում: 2013-2015 թթ. աշխատել է LAND-DATA Eurosoft-ում որպես LDE ակադեմիայի ղեկավար, խորհրդատու, դասընթացավար: 2015-2019թթ. Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) շրջանակներում

որպես բույսերի սնուցման դասընթացի հրավիրված դասախոս (երկարաժամկետ) աշխատել է Ղրղզստանի պետական համալսարանի ագրոնոմիայի և անտառտնտեսության ֆակուլտետում , Բիշքեկ, Ղրղզստան: 2016 թ-ից որպես հրավիրված դասախոս աշխատել է Ղրղզստանի Թուրքական Մանաս համալսարանում, Բիշքեկ, Ղրղզստան:

Քրիստինե Մարտինի Հակոբյանը 2004 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Դասավանդում տարրական դասարաններում» բաժինը՝ ստանալով դասվարի որակավորում և մագիստրոսի կրթական աստիճան: 2015 թվականին ավարտել է ԳԱԱ-ի «Տուրիզմի հիմունքներ», «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում» 5-ամսյա հեռահար դասընթացները: 2011 թվականին մասնակցել է «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության պետական կրթական չափորոշչի մշակման աշխատանքներին: 2015 թվականին մշակել և իրականացրել է հեռահար դասընթաց Moodle հարթակում: «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» և «Օժանդակ և լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտական ձեռնարկների հեղինակն է: 2008-2014 թթ. մասնակցել է ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացվող ամենամյա վերապատրաստումներին: 2011 և 2016 թվականներին մասնակցել է «British council», «Сколково московская школа управления» կազմակերպությունների կողմից իրականացվող դասընթացներին: 2019 թվականին, համագործակցելով գերմանական GIZ կազմակերպության հետ, կազմել է «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դուալ ուսուցման մասնագիտական մոդուլային ծրագրերը: 2005 թվականից առ այսօր աշխատում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում որպես կադրերի բաժնի դեկավար և դասախոս:

Լիանա Արամի Ամիրաղյան-2010 թվականին ավարտել է երևանի «Գլաձոր» համալսարանի Օտար լեզուներ ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 2009 թվականից աշխատել է Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում՝ որպես անգլերենի դասախոս, 2012 թվականից նույն քոլեջում՝ որպես կարիերայի ստորաբաժանման պատասխանատու: «Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով» անգլերեն սպասարկման ոլորտում աշխատողների համար» ձեռնարկի հեղինակն է: 2018 թվականից հանդիսանում է ՀԱՄԿ երիտ. հանձնաժողովի փոխնախագահը: Հանդես է եկել որպես թրեյներ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամում, ՀԱՄԿ-ում, career Lab-ում:

Ռեգինա Արմենի Բաղդասարյանը 2017-2020 թթ սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Հաշվապահական հաշվառում մասնագիտությունը: 2018-2019 վերապատրաստվել է Բրիտանական խորհրդում և տիրապետում է աշխատանքային հմտություններին: 2019թ վերապատրաստվել եմ ՈԱԱԿ-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	12.01.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:00	09:30	30 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	09:40	10:20	40րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ (8-10 մասնակից)	10:30	11:10	40 րոպե
4.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	11:20	12:20	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
6.	Հանդիպում դասախոսական կազմի հետ (8-12 դասախոս)	13:40	14:40	60 րոպե
7.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:50	15:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:00	18:00	120րոպե

	13.01.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում վարչական ստորաբաժանումների ղեկավարների հետ	09:00	09:40	40 րոպե
2.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:50	10:50	60րոպե
3.	Այցելություն քոլեջի ստորաբաժանումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	10:50	11:50	60րոպե
4.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ (8-12 ուսանող)	12:00	13:00	60րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ (8-12 շրջանավարտ)	14:10	15:10	60րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:20	17:20	140 րոպե

	14.01.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Քոլեջի կառուցվող շենքի ուսումնասիրում	09:00	09:40	60 րոպե
	Այց Վանաձորի ավտոկայարան, արտադրական պրակտիկայի դիտարկում	10:00	10:25	25 րոպե
2.	Հանդիպում ուսանողների հետ (8-12ուսանող)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում գործատուների հետ (8-12գործատու)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում	13:00	13:30	30 րոպե
5.	Հանդիպում քոլեջի Խորհրդի կազմի հետ	13:40	14:20	40 րոպե

6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	14:30	15:10	40 րոպե
7.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:20	16:00	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	17:40	90րոպե
9.	Ամփոփիչ հանդիպում քոլեջի տնօրենի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
	Մասնագիտական պետական կրթական չափորոշիչներ՝ 1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում ավտոտրանսպորտում» 0411.01.5 «Հաշվապահական հաշվառում» 0811.01.5 « Գյուղատնտեսագիտություն» մասնագիտությունների համար	ՉԱՓԱՆԻՇ 3
	Մոդուլային ծրագրեր	
	Ուսումնառության և դասավանդման նյութեր	
	Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր	
	Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր	
	Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման համակարգի կանոնակարգ-ընթացակարգ	
	Ակադեմիական ազնվության քաղաքականությունը, ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթեր	
	Ուսումնական պլաններ	
	Շահակիցների կարիքների գնահատման կարգ	
	Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները	

	Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը	
	Բուկլետ	ՉԱՓԱՆԻՇ 4
	Լրացուցիչ խորհրդատվական ծառայությունների նկարագրությունը	
	Ուսանողների հավաքագրման մասնագիտական կողմնորոշման քաղաքականությունը և ընթացակարգը	
	Խորհրդատվությունների ժամանակացույց	
	Սովորողների առաջարկություններ,դիմումներ և բողոքներ ներկայացնելու և քննարկման կարգ	
	Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն	
	Ուսանողական խորհրդի կանոնադրություն	
	Ուսանողների թիվ	
	Գործատուների հարցման լրացված հարցաշար	
	Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը	ՉԱՓԱՆԻՇ 5
	Ներքին կարգապահական կանոններ	
	Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների	
	Տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման կանոնակարգ	
	Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցութի կազմակերպման և անցկացման կարգ	
	Մասնագիտական պետական կրթական չափորոշիչներ, գլուխ V	
	Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը	
	Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները	
	Դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման ընթացակարգ	
	Հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսական կազմի ցանկը	
	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների	

	Վարչական աշխատողների ցանկ	
	Պրակտիկայի վարիչի պարտականությունները	
	Լաբորանտի պարտականությունները	
	Ռեֆերատներ	ՉԱՓԱՆԻՇ 6
	Կուրսային նախագծեր	
	Դիպլոմային նախագիծ	
	Օրագիր հաշվետվություն	
	Մեթոդական ցուցումներ	
	Գնահատման թերթիկ, ուսումնառության նյութ, ուսումնառության պլան, դասավանման նյութ	ՉԱՓԱՆԻՇ 10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. ՎՊԳՔ վերակառուցվող շենքը
2. Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի կողմից ՎՊԳՔ-ին տրամադրած համակարգչային սենյակը

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր
2. ՄԿՈՒԶԱԿ – Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
3. ՊԴ կազմ – պրոֆեսորադասախոսական կազմ
4. ՈԱ մեխանիզմներ – որակի ապահովման մեխանիզմներ
5. ՈՒԽ – ուսանողական խորհուրդ
6. ՈՒՕ – ուսումնաօժանդակ կազմ